ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2019թ. N 14-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՛**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 31-ի արտահերթ նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը.*

1.1. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 18-ի N 88-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.2. Դրամական հատկացումներ կատարելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.3. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 21-ի N 76-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան*

1.4. Ջերմուկ համայնքում արտակարգ իրավիճակների դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի փոխհատուցման նպատակով, ըստ անհրաժեշտության, դրամական հատկացում կատարելու մասին

*զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | կողմ | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | բացակա | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | բացակա | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...6... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 հունվարի 31
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2019թ. N 15-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ի N 88-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 25.01.2019 թ. N 01 /08.1/0214-2019 գրությունը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 18-ի «Ջերմուկ համայնքի բնակիչների կողմից ներկայացված հանրագրում նշված առաջարկությանը հավանություն տալու մասին» N 88-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | կողմ | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | կողմ | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | կողմ | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | [signature] | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | կողմ | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | [signature] | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | կողմ | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | [signature] | |
| Սարգսյան Համլիկ Ժորայի | | [signature] | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | [signature] | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | [signature] | |

Որոշումն ընդունված չէ՝ կողմ- ......0...... դեմ-......6...... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 հունվարի 31
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2019թ. N 16-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթները՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-սոցիալական աշխատողի կողմից տնային այցելության արդյունքում ձևակերպած եզրակացությունը, ինչպես նաև բուժման շարունակականության անհրաժեշտությունը՝ Ջերմուկի համայնքի 2019 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից ֆինանսական օգնություն տրամադրել Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչներ Ժաննա Ստեփանյանին և Սեդա Ղամբարյանին՝ յուրաքանչյուրին՝ 100 000 (հարյուր հազար) դրամի չափով:

2. Ջերմուկ քաղաքի տարածքում ակտիվ գործունեություն ծավալող «Ապագայի շողեր» հասարակական կազմակերպությանը տրամադրել 100 000 (հարյուր հազար) դրամ՝ ցերեկային խնամքի կենտրոնի ուսումնադաստիարակչական գործունեությանը աջակցելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Ջավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | բացակա | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | բացակա | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Համմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......6...... դեմ-.....0...... ձեռնպահ- ...0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 հունվարի 31
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2019թ. N 17-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետին և 36-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների 2019 թվականի թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 76-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

* Հավելվածում՝

«Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 23-ի «Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 21-ի N 76-Ա որոշման մեջփոփոխություններ կատարելու մասին» N 10-Ա որոշման 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերը և վերջին պարբերությունը:

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով՝ նոր խմբագրությամբ հաստատված հաստիքացուցակը համարվում է Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 21-ի N 76-Ա որոշման հավելվածի բաղկացուցիչ մասը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | Բաբայան | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | կողմ | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | կողմ | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | կողմ | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | կողմ | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | | | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......6...... դեմ-......0...... ձեռնպահ-0......

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 հունվարի 31
Ջերմուկ

Հավելված 1
Ջերմուկ համայնքի ավագանու
2019 թվականի հունվարի 31 -ի
N 17-Ա որոշման

. «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
աշխատակիցների թվաքանակը

| հ/հ | պաշտոնի անվանումը | հաստիքային միավորը | դրույքի չափը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | տնօրեն | 1 | 205000 | 205000 |
| 2 | երիտասարդության հարցերով մասնագետ | 1 | 125000 | 125000 |
| 3 | ակումբավար | 3 | 100000 | 300000 |
| 4 | զբոսաշրջության հարցերով մասնագետ | 1 | 125000 | 125000 |
| 5 | մարզիչ | 1 | 135000 | 135000 |
| 6 | մարզիչ | 2.5 | 115000 | 287500 |
| 7 | բուժքույր | 0.75 | 100000 | 75000 |
| 8 | հավաքարար | 2 | 100000 | 200000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | **12.25** | **1005000** | **1452500** |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2019թ. N 18-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ԸՍՏ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ համայնքի վարչական տարածքում արտակարգ իրավիճակների դեպքում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման նպատակով, ըստ անհրաժեշտության և վնասի հաշվառման-գնահատման մասնագիտական եզրակացություններին համապատասխան, Ջերմուկ համայնքի բյուջեի 4841 «Բնական աղետներից առաջացած վնասների վերականգնում» (ընթացիկ ծախսերի դեպքում) և 5113 «Շենքերի, շինությունների կապիտալ վերանորոգում» (կապիտալ ծախսերի դեպքում) տնտեսագիտական հոդվածներից Ջերմուկ համայնքի ղեկավարից կողմից դրամական հատկացումներ կատարելու:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | բացակա | | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | բացակա | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | բացակա | | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | [signature] | | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | բացակա | | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | [signature] | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա | | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սարգսյան Համիկ Ժորայի | | | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | | | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......6...... դեմ-......0...... ձեռնպահ- ...0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2019 հունվարի 31
Ջերմուկ

Ջերմուկ